**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ , 27փողոց, 7/6
հեռախոս /032268781/


**ՀՀ ՎԱՆԱՁՈՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ**

N 88
*25 ապրիլ 2016թ.*

Ի կատարումն <<Սոցիալական աջակցության մասին >> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.09.2015թ. << Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին >> N1044-Ն որոշման պահանջների՝ հայտնում ենք, որ ԼՄ Լեռնապատ համայնքը համաձայն է միանալու Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության համաձայնագրին և հայտնում ենք մեր համաձայնությունը հետևյալի մասին՝

գործել Համաձայնագրի նպատակներին և սոցիալական աջակցության սկզբունքներին համապատասխան,

գործադրել լավագույն ջանքերը Համաձայնագրում ամրագրված դրույթներն իրագործելու համար:

Կից ներկայացնում ենք մեր տվյալները.

ԼՄ Լեռնապատ համայնք, իրավաբանական անձի պետական ռեգիստրում գրանցման վկայական N 01Բ1027063, գրանցման համար՝62.180.877063, գրանցման ամսաթիվը՝ 2000-05-03, փաստացի գործունեության հասցեն՝ գ. Լեռնապատ, 27 փողոց, 7/6, էլեկտրոնային փոստ՝ Lernapat.Lori@mta.gov.am, հեռախոս՝032268781, կայք՝Lernapat.am, ներկայացուցիչ՝ աշխատակազմի քարտուղար Համիկ Վարդանյան:

Իրականացվող ծրագրերը՝

Սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց հայտնաբերում, անհատական սոցիալական ծրագրերի կազմում և դրա իրականացում, շարունակական հսկողության ապահովում: Անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում , առկա տվյալների և փաստաթղթերի փոխանակում , որոնք անհրաժեշտ են սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց /ընտանիքներին/ տվյալ սոցիալական ծառայության տրամադրման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան 032268781*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ
«28» 04 2016 թ.
ՄՈՒՏՔ N 963 ԳՈՐԾ N